CALIFORNIA DEPARTMENT OF
HEALTH CARE SERVICES
Michelle Baass | Director

Medi-Cal

2023 հոկտեմբեր

Կարևոր նորություններ Ձեր առողջական ապահովագրության վերաբերյալ

Հարգելի Medi-Cal-ի անդամ,

Լա՛վ լուր: Շուտով Դուք կարող եք ավելի շատ Medi-Cal նպաստներ ստանալ: **2024 թվականի հունվարի 1-ից** full Medi-Cal-ը հասանելի կլինի 26-ից 49 տարեկան մեծահասակների համար, ովքեր իրավասու են Medi-Cal-ին: **Full** Medi-Cal-ը տարբերվում է **restricted** Medi-Cal-ից, որն այժմ ունեք: Restricted Medi-Cal-ն ընդգրկում է միայն շտապ օգնության ծառայությունները: Այն չի ներառում այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են բժշկությունը և առաջնային խնամքը:

Ինչը պետք է հաշվի առնեք առաջիկա ամիսներին.

- Ձեր ներգաղթի կարգավիճակը չի դիտարկվի որպես իրավասության գործընթացի մաս:
- **2023 թվականի դեկտեմբերին Դուք փոստով նամակ կստանաք, որում կնշվի, թե արդյոք կստանաք և երբ կստանաք full Medi-Cal:**
- **Դուք կստանաք լրացուցիչ առողջապահական ծառայություններ full Medi-Cal ծրագրի միջոցով:**
- Medi-Cal-ն անվճար կամ մատչելի բժշկական խնամք ունի California-ում ապրող մարդկանց համար:

Full Medi-Cal-ն ընդգրկում է այս ծառայությունները և ավելին.

- Բժշկական խնամք
- Դեղորայք, որը պատվիրում է Ձեր բժիշկը
- Մասնագիտացված խնամք
- Հոգեկան առողջության խնամք
- Ընտանիքի պլանավորում և մայրության խնամք
- Շտապ օգնություն
- Հետազոտություններ Ձեր բժշկի կողմից
- Բժշկական պարագաներ
- Ալկոհոլի և թմրամիջոցների կախվածության բուժում
- Ատամնաբուժական խնամք

- Բժշկի մոտ և ատամնաբուժական այցելությունների փոխադրումներ և դեղատոմսեր ստանալու համար
- Տնային խնամք և աջակցություն՝ օգնելու խուսափել ծերանոցային խնամքից
- Տեսողության խնամք (ակնոցներ)
- Լսողական սարքեր
- Ոտքերի խնամք

Եթե Դուք այժմ ունեք հղիության հետ կապված Medi-Cal, ապա Դուք ունեք բոլոր բժշկական անհրաժեշտ ծառայությունները, որոնք Medi-Cal-ն ապահովագրում է:

Դուք կարող եք ավելին իմանալ Medi-Cal-ի մասին այս նամակին կցված Անդամների FAQ-ից (Հաճախակի տրվող հարցեր):

Ստորև կգտնեք կարևոր տեղեկություններ, որոնք Ձեզ կտեղեկացնեն հաջորդ քայլերի մասին.

Ձեզ հարկավոր չէ լրացնել Medi-Cal-ի նոր դիմում:
Դուք արդեն ունեք restricted Medi-Cal, ուստի կարիք չկա լրացնել նոր հայտ full Medi-Cal-ի համար: **Եթե իրավասու եք full կամ SOC Medi-Cal-ին, Դուք ինքնաբերաբար կգրանցվեք դրան:**

Եթե փոստով փաթեթ եք ստանում՝ Ձեր Medi-Cal-ը թարմացնելու համար, լրացրեք այն և վերադարձրեք: Դուք կարող եք զանգահարել Ձեր վարչաշրջանի գրասենյակ օգնության համար:

Ինչպե՞ս եք ստանալու բժշկական ծառայություններ:
Full Medi-Cal ունեցող մարդկանց մեծամասնությունը բուժսպասարկման ծառայություններ կստանա Medi-Cal Managed Care Plan-ի միջոցով: Medi-Cal Managed Care Plan առողջապահական ծրագիր է, որն աշխատում է Ձեր սպասարկման տարածքում գտնվող բժիշկների, հիվանդանոցների և այլ առողջապահական ծառայություններ մատուցողների հետ՝ Ձեզ տրամադրելու Medi-Cal-ի՝ Ձեզ անհրաժեշտ ծառայությունները:

Երբ Դուք միանում եք Medi-Cal Managed Care Plan, Դուք դեռ կարող եք որոշ ծառայություններ ստանալ Fee-For-Service (regular) Medi-Cal-ի միջոցով՝ Ձեր Medi-Cal Managed Care Plan-ի փոխարեն: Շրջանների մեծ մասում, դրանք ներառում են տնային և համայնքային որոշ ծառայություններ, Medi-Cal-ի դեղատնային ծառայությունների մեծ մասը, թմրամիջոցների օգտագործումից առաջացած խանգարումների բուժման ծառայությունները և ատամնաբուժական ծառայությունները:

Ձեր Medi-Cal Managed Care Plan-ի ընտրությունները կախված են այն վարչաշրջանից, որտեղ Դուք ապրում եք: Որոշ վարչաշրջաններ ունեն մեկ ծրագիր: Որոշ վարչաշրջաններ ունեն մեկից ավելի ծրագրեր, որոնցից կարող եք ընտրել: Մենք Ձեզ փոստով նամակ և *My Medi-Cal Choice* packet կուղարկենք Ձեր ծրագրի ընտրությամբ:

Ինչպե՞ս կստանաք առողջապահական ծառայություններ, եթե ունեք Medi-Cal՝ Share of Cost-ով (SOC):
Եթե Դուք ունեք SOC, կարող եք ստանալ Ձեր բժշկական ծառայությունները Fee-For-Service (regular) Medi-Cal-ի կամ Medi-Cal Managed Care Plan-ի միջոցով: Հնարավոր է, որ կարիք չունենաք ընտրել Medi-Cal Managed Care Plan: Fee-For-Service (regular) Medi-Cal-ում Դուք կարող եք այցելել ցանկացած բժշկի, ով ընդունում է Fee-For-Service (regular) Medi-Cal:

Դուք պետք է պահեք Ձեր Medi-Cal Benefits Identification Card (BIC):
Ձեր BIC պլաստիկ քարտը նարնջագույն է՝ կակաչներով կամ կապույտ և սպիտակ դիզայնով: Ձեզ այն պետք կգա, երբ ստանաք full կամ SOC Medi-Cal: Զանգահարեք Ձեր վարչաշրջանային գրասենյակ, եթե Ձեզ անհրաժեշտ է նոր BIC:

Միշտ վերցրեք Ձեր BIC-ը Ձեր բժշկի մոտ և այլ բժշկական և ատամնաբուժական այցելությունների գնալիս: Երբ Դուք Medi-Cal Managed Care Plan-ում եք, Ձեր նոր ծրագրից քարտ կստանաք: Դուք պետք է ցույց տաք երկու քարտերն էլ, երբ այցելեք Ձեր բժշկին, ատամնաբույժին, դեղատանը և այլ բժշկական մատակարարներին:

Ռեսուրսներ Ձեր և Ձեր ընտանիքի համար՝ Ձեր Medi-Cal-ի ծառայությունների մասին տեղեկացնելու համար.

Դուք օգնության կարիք ունեք այլ լեզվով:
Եթե անգլերենից բացի այլ լեզվով օգնության կարիք ունեք, կարդացեք այս նամակի հետ կցված անվճար լեզվական օգնության ծառայությունների հեռախոսահամարների ցանկը: Կապվեք լեզվի աջակցության ծառայության հետ՝ բանավոր թարգմանիչ ստանալու համար, ով կօգնի Ձեզ կարդալ այս նամակը:

Դուք կարող եք ստանալ նյութեր այլ ձևաչափով:
Դուք կարող եք խնդրել ստանալ Ձեր Medi-Cal-ի նպաստների մասին բոլոր գրավոր տեղեկությունները այլ ձևաչափով: Ձևաչափը կարող է լինել Բրայլ, խոշոր տպագիր, աուդիո կամ տվյալների ձայնասկավառակ կամ որևէ այլ ձևաչափ, որը կօգնի Ձեզ հասկանալ և կարդալ տառերը կամ լրացնել Ձեր փաթեթը: Այդ խնդրելու համար կարող եք.

- Այցելել afs.dhcs.ca.gov: Հետևել հրահանգներին՝ այլ ձևաչափ ընտրելու համար:
- Զանգահարեք **1-833-284-0040** (California Relay 711): Զանգն անվճար է:
- Կապվեք Ձեր տեղական վարչաշրջանային գրասենյակի հետ: Դուք կարող եք գտնել Ձեր տեղական վարչաշրջանի գրասենյակի մասին տեղեկությունները dhcs.ca.gov/COL կայքէջում:

Անձնական օգնության համար կարող եք կապվել Ձեր համայնքի բուժսպասարկման գրանցման հարցերով զբաղվող աշխատակցի հետ: Այցելեք GetMedi-CalCoverage.dhcs.ca.gov և ընտրեք Find Local Help (Գտնել տեղական օգնություն):

Medi-Cal Managed Care Plans-ի մասին իմանալու համար զանգահարեք Health Care Options՝ 1-800-430-4263 (TDD/TTY-ից օգտվողները զանգահարում են 1-800-430-7077): Զանգն անվճար է: Կամ այցելեք Health Care Options-ի կայքէջ՝ healthcareoptions.dhcs.ca.gov:

Դուք կարող եք ավելին իմանալ Adult Full Medi-Cal Expansion-ի մասին DHCS-ի կայքէջում՝ bit.ly/AdultExpansion:

Ներգաղթի և Medi-Cal ծրագրի վերաբերյալ հարցերի համար.
Ներգաղթի մասին տեղեկությունների և ռեսուրսների համար այցելեք California's Immigrant Guide՝ immigrantguide.ca.gov:

U.S. Department of Homeland Security-ը և U.S. Citizenship and Immigration Services-ը **ՉԵՆ** համարում առողջության, սննդի և բնակարանային ծառայությունները որպես հանրային բեռի (public charge) որոշման մաս: Հետևաբար, Medi-Cal-ի նպաստների օգտագործումը (բացառությամբ ծերանոցի կամ հոգեկան առողջության հաստատության խնամքի) **ՉԻ** ազդի անհատի ներգաղթի կարգավիճակի վրա: Երբ ինչ-որ մեկը դիմում է պետության կողմից ֆինանսավորվող նպաստների համար, նրա տեղեկությունները օգտագործվում են միայն որոշելու համար, թե արդյոք նա համապատասխանում է: Նահանգային օրենքները պաշտպանում են նրա տեղեկատվության գաղտնիությունը:

Հանրային բեռի մասին տեղեկանալու համար տե՛ս California Health and Human Services Agency Public Charge Guide, այցելելով՝ chhs.ca.gov/public-charge-guide/:

California Department of Social Services (CDSS) ֆինանսավորում է իրավասու ոչ առևտրային կազմակերպություններին ծառայություններ մատուցելու California-ում ապրող ներգաղթյալներին: Այս կազմակերպությունների ցանկը հասանելի է bit.ly/immigration-service-contractors կայքէջում:

Շնորհակալություն,

Department of Health Care Services